

ՀՈԼՈԿԱՍՏ ՄԻ ՇԱՐՔ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄՈԿԱՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿՈՒՄ

Գրաբարում բացառական հոլովը կազմվում է՝ սկզբից ավելացնելով ի նախդիրը: Ձայնավորից առաջ այդ նախդիրը դառնում է յ և արտասանվում հ: Մ. Կաղանկատվացու երկում հաճախ հանդիպում են ձայնավորով սկսվող բառեր, որոնք միաժամանակ ստանում են նախդրի երկու ձևերը. օրինակ՝ ի յահէ (էջ 156), ի յարևելից (էջ 103), ի յորդոյ (էջ 25), ի յԱստուծոյ (էջ 63), ի յայծեաց (278), ի յենոսայ (էջ 268), ի յերկրէ (էջ 43) և այլն:¹

Ինչպես երևում է, յ-ի դերը՝ որպես բացառականի ցուցչի, թուլացել է, չի գիտակցվում, ուստի օգնության է գալիս ի նախդիրը:

Նույն պատկերն է ներգոյականի կազմության ժամանակ: Քանի որ այդ նախդրով կազմվում է նաև ներգոյական հոլովը, ուստի այս դեպքում ևս նախդիրը հաճախակի կրկնվում է. օրինակ՝ ի յԱլան (էջ 319), ի յաջակողմն (էջ 22), ի յերկինս (էջ 26, 38), ի յերկրի (էջ 28, 202, 125), ի յաշխարհիս (էջ 25) և այլն:

Եթե բառն ունի նախադաս լրացում, ապա մի դեպքում երկու նախդիրներն էլ ստանում է լրացումը. ինչպես ի յաստուածագան վարդապետացն (էջ 315), մյուս դեպքում նախդիրներից մեկը ստանում է լրացումը, մյուսը՝ լրացալը. այսպես՝ յամենագօրեն յԱստուծոյ (էջ 59): Կա դեպք, երբ ձայնավորով սկսվող բառը յ-ի փոխարեն ի նախդիր է ստացել ի աղկաղէ ամսոյ (էջ 290):

Մեր լեզվի հնագույն շրջանում գործածվել է ուստ մասնիկով բացառականը, որն արդեն դասական գրաբարում կորցրել էր այդ իմաստը և դարձել էր մակբայակերտ ածանց:² Կաղանկատվացու երկում այդ ածանցով կազմվել են սակավաթիվ բացառականի ձևեր. օրինակ՝ յաստուածուստ (=աստծուց, աստծու կողմից, էջ 14, 50, 117, 201), յարքունուստ (էջ 151): Պետք է նշենք, սակայն, որ վերջին օրինակը՝ յարքունուստ, գտնում ենք V դարի բոլոր պատմիչների մոտ, իսկ յաստուածուստ բառածը նրանցից ոչ մեկը չունի:

Հայերենի զարգացման ընթացքում հոլովման տարբեր ձևերը ձգտում են միևնույն ձևի վերածվելու: Գործիականում —ով վերջավորություն են ստանում տարբեր հոլովումների պատկանող սակավաթիվ բառեր. օրինակ՝ քինով (էջ 93), միգով (էջ 188, 263), որոնցից առաջինը ու հոլովման բառ է, մյուսը՝ ի-ա:

¹ Քիչ չեն նաև օրինաչափ դեպքերը:

² Տե՛ս Ս. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 22:

Աճճանունների մեջ ևս հանդիպում են՝ Շահենով (էջ 134), Քրիստոսատրով, գրիգորով, Սարգսով (էջ 282):

Հին հայերենում ներգոյականի իմաստն արտահայտվել է ի նախորդով և տրական, հայցական հոլովներով, չնայած շատ քիչ բառեր տրականում ստացել են –ում, որից էլ կազմվել է ներգոյականը: Մ.Կաղանկատվացու երկում ներգոյականը կազմվել է այնպես, ինչպես սովորաբար կազմվել է գրաբարում (ի+ եզակի տրական, հոգ. հայցական), սակայն հանդիպում են –ում վերջավորությամբ հետևյալ օրինակները. յանհաստատելի կենցաղումս (էջ 213), ի ներքս յարքայականին գտաք յառագաստումն (էջ 209), ի սրբումն կոչարանի լուսատու յԱմարասումն լինել գսա (էջ 209):

Ուստ, ուրդ, ունդ վերջածանց ունեցող մի շարք բառեր սեռականում ստացել են եան վերջավորությունը: Չնայած դրանց մի մասը հոլովվում է ի կամ ո հոլովիչներով, այնուամենայնիվ հեղինակը նախապատվությունը տվել է սեռականի եան վերջավորությանը. օրինակ՝ սնունդ - սննդեան, փախուստ - փախստեան, խորհուրդ - խորհրդեան, հանգիստ - հանգստեան:

«Սփռեալ էր զանծուկ սիրոյ իւրոյ ի տեղիս տեղիս սննդեան իւրոյ» (էջ 151): «Յորում այց արար Աստուած ի ձեռաց նոցա ժողովրդեան իւրում ի փրկութիւն» (էջ 163): «Գնայ փախստեամբ յերեսաց նորա» (էջ 116): «Խորհի Տուանշիր տեղի հանգստեան տէրունական նշանին գտանել» (էջ 184): «Առ ի սպանանել գերանելին Վրթանէս խորհրդեամբ կնոջ թագաւորին» (էջ 35):

Խորհուրդ բառը հանդիպում է նաև ո հոլովիչով. «Քահանայն Տրիոյ իրագէտ լինել մեծասքանչ խորհրդոյն» (էջ 75, 121): V դարում տարածված էր այս բառի ո հոլովմամբ գործածությունը, եան-ով ձևերը սակավադեպ էին:

Ամիս բառը երկում գործածված է հավասարաչափ և ո հոլովիչով, և՛ եան վերջավորությամբ: «Ապա կամ եղև արքայի առնել ժողով յԱղուէնն բազմաբոխ ատեան յամսեանն մարերի, որ օր երեքտասան էր ամսոյն» (էջ 89): Այս նախադասության մեջ երկու ձևերն էլ գործածված են: Զր. Աճառյանը այս բառի հոլովման վաղեմի ձևն է համարում ամսեան³:

Զետաքերթական է, որ երկում գտնում ենք անձնանուններ, որոնք ևս եան վերջավորություն են ստացել: «Պաւղոսեան հաւանեալ ծայնի» (Պողոսի խոսքի համածայն, էջ 32):

Կայեն անունը մույնպես ստացել է այդ վերջավորությունը: «Ի Կայենեան ընկղմեալ ախտ» (էջ 222): Կամ՝ «Հրամայէր տանջանաւոր մահուամբ

³ Տես Զր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.1, Երևան, 1971, էջ 157:

կենսագրաւել զսուրբ զօրավարն Թէովփիլեան հանդերձ երեսուն ընկերօքն» (էջ 104), զՍողոմոնեան տաճարին (էջ 269):

Տեղանուններից հանդիպում է Երուսաղէմեան բառը (էջ 100):

Բերենք նաև հետևյալ օրինակները. Երուսաղէմեան մասնաւորեալ նշխարք սրբոց են (էջ 207), Երուսաղէմեան են (էջ 210): Եան վերջավորութիւնը սեռականի ցուցիչի դեր է կատարել, իսկ այս օրինակում չկա այդ դերը. յերուսաղէմեան քաղաք (էջ 98):

Որոշ տեղանուններ ածանցված ձևով են գործածվել. ստացել են -ական ածանցը. Կուրական գետոյն (էջ 99, 103), Տրտուական գետոյն (էջ 99, 205), Արցախական գաւառացն (էջ 157), յԱրցախական գաւառն (էջ 99), ի գաւառն Ուտիական (էջ 95), Արցախական կողմանց (էջ 203), անցեալ զԿուրական գետովն (էջ 103), յՈւտիական գաւառ (էջ 178), ի ձերուն Արցախական գաւառս (էջ 268):

Տեղանունների ածանցված գործածություն եղել է նաև V դարում:

Կորյունի «Վարք Սաշտոցի» աշխատության մեջ հանդիպում են հետևյալ օրինակները՝ ի Տարօնական գաւառէն, ի Սամուսատական քաղաքն, ի Խործենական գաւառէն, ի քաղաքն Կոստանդինական⁴: 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին իր աշխատության մեջ ևս գործածել է. Տօրոսական լերինն, Տաւրոսական լերինն, ի Տաւրոսական Ձռայլ:⁵

Ո հոլովման պատկանող մի շարք բառեր ներգոյականի կազմության ժամանակ ստանում են ի հոլովիչ: Գուր բառը սովորաբար այդ հոլովիչով է հանդիպում⁶: Կաղանկատվացու մոտ նկատում ենք ինչպես ի գքի (էջ 12) ձևը, այնպես էլ ի գուր (էջ 11):

Պաշտամունք բառի հոգնակի գործիականը պաշտամամբք ձևի փոխարեն հանդես է եկել պաշտամամբք ձևով (էջ 46)⁷:

Մահ բառը հավասարապես գործածված է ինչպես ու հոլովիչով՝ մահու (էջ 146, 147), այնպես էլ ա՝ մահուան (էջ 184, 45):

Ութ ածանցով վերջացող բառերը պատկանում են ո հոլովման⁸:

Կաղանկատվացու մոտ գտնում ենք խնդրուածոց բառը, այսինքն ա հոլովիչով է հոլովվել: Որոշ սակավաթիվ ձեռագրեր ունեն խնդրուածոց ձևը:

⁴ Կորյուն, «Վարք Ս.Մեսրոպ Սաշտոցի», Երևան, 1994, էջ 87:

⁵ Թ. Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 122, 126:

⁶ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 38:

⁷ Այլ ձեռագրերում առկա է նաև պաշտամամբք ձևը:

⁸ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 40:

Հաւ (պապ) բառը հոլովվել է և՛ հաւու (էջ 36) ձևով, և՛ ո հոլովիչով (էջ 20, 36):

Վանք բառը հոլովվել է վանաց (էջ 294, 300) և վանից (էջ 303, 309) ձևերով:

Աստուած բառը թեք հոլովներուն լինում է Աստուծոյ, բայց երկուն երեք անգամ գործածված է անհնչյունափոխ ձևով՝ Աստուածոյ (էջ 25, 53, 211): Այս բառի հոլովման մասին Հր. Աճառյանը գրում է. «Աստուծոյ ձևը միջին հայերէն է, որ կանոնաւորապէս յառաջացած է հնագոյն աստուածոյ սեռականից, միջին ա-ի անկման օրէնքը հաստատելուց յետոյ. աստուածոյ ձևը տառացի գրուած չլինելով անհետացել է և ժողովրդական աստուծոյ ձևը անցել է նրա տեղը՝ նոյն իսկ հնագոյն բնագրերի մէջ»⁹:

Եպիսկոպոս բառի հոգնակին գործածել է եպիսկոպոսունս (էջ 50, 213) և եպիսկոպոսս (էջ 50, 60) ձևերով:

Ո՛ւ հոլովման պատկանող առաւօտ բառը՝ հոլովվել է ինչպես ու հոլովիչով՝ առաւօտուն (էջ 70, 79, 108), այնպես էլ ի՛ զառաւօտին (էջ 70):

Երէջ-ը զուգահեռաբար հոլովվել է ու՛ երիցու (էջ 39, 90) և ո՛՝ երիցոյն (էջ 39) հոլովումներով:

Ջուգահեռ ձևերով են հոլովված տէր, հայր, կին բառերը՝ հարց (էջ 107, 262, 339), հարանց (էջ 282), տեարց (էջ 305), տերանց (էջ 330), կանանց (էջ 34, 43, 281, 289), կանաց (էջ 321, 338): Վերջին օրինակների մասին «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մէջ կարդում ենք. «Գործիական կնաւ և հոգնակի սեռական կանաց հնագոյն ձևերն են, որոնք այր բառի հետ հաճախակի գործածության պատճառով՝ նրա նմանությամբ շուտով ստացել են կանամբք, կանանց ձևերը. այսպես՝ արանց և կանանց»:¹⁰ Երկուն հենց կանանց ձևն էլ ավելի շատ է գործածվել:

Քաջ բառը ի-ա խառը հոլովում ունի, բայց հանդիպում է հոլովված տարբեր կերպ՝ քաջիւն (էջ 40), քաջօք (էջ 153):

Կա նաև հետևյալ զուգածությունը՝ սպառազինօք (էջ 43), սպառազինուք (էջ 131):

Աստղ, ուստր, դուստր բառերի գործիականը Կաղանկատվացին կազմել է հետևյալ կերպ՝ աստեղօք (էջ 106), ուստերօք, դստերօք (էջ 143). (սրանց զուգահեռ ձևերն են՝ աստեղբք, դստերբք): Կաղանկատվացին հոգնակի գործիա-

⁹ Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 279-280:

¹⁰ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, էջ 440:

կանի այս ձևերը չունի: Նույնիսկ Ս. Խորենացին չունի դատերոք բառաձևը, այլ՝ դատերօք:

Ի հոլովման պատկանող հաց բառը հոլովվել է ո հոլովիչով՝ հացոյ (եջ 90):

Էջ բառը հոլովված է և ու հոլովիչով, և ո. օրինակ՝ իշոյ (եջ 165), իշու (եջ 45, 169): Աշոտ Աբրահամյանը բառը նշում է որպես ո հոլովման պատկանող, իսկ Արմատական բառարանը նշում է ո և ու հոլովման:

Այծ բառը ևս պատկանում է ի հոլովման, սակայն երկուս գտնում ենք՝ յայծեաց (եջ 102), (Ա. գրքում կա նաև հոգ. այծիք, սեռ. այծեաց):

Տարբեր հոլովումների է պատկանում շեն բառը՝ շինոյն (եջ 92), ի շինեն (եջ 92, 93):

Պահք բառը («կերակուրի ժուժկալություն» իմաստով) պահովք ձևի փոխարեն հոլովված է պահօք (եջ 36):

Նույնը կարող ենք ասել հաւատ բառի վերաբերյալ, որը ո հոլովման բառ է և գործածվում է մանավանդ անեզաբար: Երկուս հանդիպում է այս բառի գործիականի երկու ձևերը՝ հաւատօք (եջ 36), հաւատովք (եջ 101):

Երկուս առկա են շատ այլ զուգաձևություններ՝ բլրոյն (եջ 71), ի բլրեն (եջ 111), գանծու (եջ 330), գանծուց (եջ 105), գանծին (եջ 111), գանծիք (եջ 317). այսինքն՝ ի և ու հոլովիչներով, սովուց (եջ 127), սովոյ (եջ 156):

Հր. Աճառյանը այս վերջին բառը համարում է ո հոլովման, չնայած կան նաև ու հոլովիչով:¹¹

Բերդ բառը հոլովված է բերդից (եջ 115) և բերդոյ (եջ 339) ձևերով: Արմատական բառարանը տալիս է ի-ա հոլովման:¹²

Գեղարդն բառի ն վերջնահնչյունը ընկել է և հոլովված է հետևյալ կերպ՝ գեղարդաց (եջ 110): Բառը ա ներքին հոլովման է պատկանում և հոգ. սեռականում պիտի լիներ գեղարդանց:¹³

Հանդիպում են այս զուգաձևությունները՝ քաղեայցն (եջ 256) և քաղեիցն (եջ 257): Փ.Բուզանդը երկրորդ ձևն ունի:

Լեզու բառը ևս տարբեր հոլովիչներով է հանդիպում՝ լեզուոյն (եջ 199), լեզուա (եջ 211), լեզուացն (եջ 245): Արմատականը այս բառը տալիս է ի-ա հոլովման, նաև՝ ո հոլովման:

Գործածել է ակունս պատուականս կապակցությունը (եջ 312), որը նշանակում է «թանկագին քարեր»: Հարկ է նշել, որ «գոհարեղեն» իմաստով

¹¹ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, էջ 494:

¹² Արմատական բառարան, հ.1, էջ 442:

¹³ Նույն աշխատ., հ.1, էջ 533:

պետք է լինի ականք, իսկ ակունքը-ը ջրի իմաստով է, բայց ունի նաև՝ զականց պատուականաց (էջ 124):

Աղախին բառը հոլովված է աղախնեայս (էջ 186, 189) ձևով: Ա. Աբրահամյանը տալիս է հետևյալ ձևերը՝ աղախնոյ, աղախնայք, աղախնայց, աղախնաց կամ աղախնանց,¹⁴ իսկ Գ.Զահուկյանը՝ -այք, -եայք մասնիկներով:¹⁵

Անդրադառնանք հատուկ անունների հոլովմանը, նախ անձնանունների: Անձնանունները մեծամասամբ ա հոլովման են պատկանում¹⁶, այդպես է նաև Կաղանկատվացու երկուն. օրինակ Երուանդայ (էջ 13), Սեմայ (էջ 3), Ադամայ (էջ 3), Վարդանայ (էջ 113), Հայկայ (էջ 7), Բակուրայ (էջ 303) և այլն: Երկուն սակայն այլ հոլովումների պատկանող մի շարք անձնանուններ ևս ա հոլովիչով են հոլովվել: Խոսրով անձնանունը ավելի շատ գործածված է ու հոլովմամբ, որը օրինաչափ է, սակայն հազվադեպ պատահում է նաև ա հոլովմամբ Խոսրովայ (էջ 29, 135, 147): Յովսեփ անունը ու-ի փոխարեն հոլովվել է ա հոլովիչով Յովսեփայ (էջ 280, 334): Մարիամը հոլովվել է Մարիամայ ձևով (էջ 313): Գրիգոր անունը մի օրինակում հոլովվել է ա հոլովիչով Գրիգորայ (էջ 302), բազմաթիվ այլ դեպքերում ի Գրիգորի (էջ 7, 14, 18, 34), իսկ մի դեպքում էլ եզակի գործիականը ստացել է ո հոլովիչ Գրիգորով (էջ 282):

Աբրահամ անունը գործածվել է օրինաչափ ձևով՝ ու հոլովիչով, բայց ունի նաև՝ յԱբրահամայ (էջ 276):

Սաթնիկ անունը հոլովված է ա արտաքին հոլովմամբ՝ Սաթնկայ (էջ 13):

Հունական աս, էս, ոս, էաս, իոս, էոս հնչյունակապակցություններով վերջացող անձնանունները հոլովվում են ա հոլովիչով. օրինակ Կադմեայ (էջ 5), Հերակլեայ (էջ 142), բայց հանդիպում է նաև Հերակլի (էջ 133, 140), ինչպես նաև՝ Թեոփիլեայ (էջ 103, 105), բայց Թեոփիլոսի (էջ 103): Այս անձնանունը հանդիպում է նաև Թեոփիլեան ձևով (էջ 104)¹⁷: Թեոփիլոսը գործածված է նաև Թեոփիլե տարբերակով (էջ 104, 105): Վերոհիշյալ հնչյունակապակցություններով անունները միտում ունեն դեպի ի հոլովումը: Այդ են վկայում հետևյալ օրինակները՝ Գրիգորիոսի (էջ 33), Վրթանեսի (էջ 31), Աթանասիոսի (էջ 101), Յուստիանոսի (էջ 286):

Որոշ անուններում վերոհիշյալ հնչյունակապակցությունները դուրս են գալիս, և ավելանում է ի հոլովիչ. օրինակ՝ Տիմոթի (էջ 122), Տիբերի (էջ 201):

¹⁴ Ա. Աբրահամյան, Գրաբարի ծեռնարկ, էջ 40:

¹⁵ Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխառնը և նրա ծագումը, էջ 86:

¹⁶ Ա. Աբրահամյան, Գրաբարի ծեռնարկ, էջ 25:

¹⁷ Այս մասին վերը խոսվել է:

Կաղանկատվացու երկուսն ա-ից հետո հաճախադեպ են ի հոլովմամբ անունները. օրինակ՝ Նոյի (էջ 3), Յաբեթի (էջ 4), Ուռնայրի (էջ 14), Արտաշեսի (էջ 13), Կոստանդնի (էջ 196) և այլն:

Յովհաննես անունը առկա է և ու հոլովիչով՝ Յովհաննու (էջ 121, 125), և ի հոլովիչով՝ Յովհաննիսի (էջ 122): Զուգահեռ հոլովմամբ է հանդես եկել նաև Աշոտ անունը՝ Աշոտի (էջ 334, 335) և Աշոտյ (էջ 336):

Հատուկ տեղանունների դեպքում ևս գերակշռում են ա հոլովմամբ բառերը՝ Կուրայ (էջ 142), Պարտաւայ (էջ 132), Ամարասայ (էջ 35), Հաբանդայ (էջ 39), Տրտուայ (էջ 133), Արցախայ (էջ 120) և այլն:

Զուգաձևություններ են առկա տեղանունների մեջ. այսպես՝ Ատրպատականայ (էջ 12) և Ատրպատականու (էջ 132, 142): Այս տեղանունը V դարի պատմիչներ Փ. Բուզանդը և Մ. Խորենացին գործածել են ի հոլովմամբ: Կաւկաս բառը երբեմն հանդիպում է հոլովված ա հոլովիչով՝ Կաւկասայ (էջ 9, 333), իսկ ավելի շատ՝ Կաւկասու (էջ 8, 12, 141):

Պուհն տեղանունը հոլովվել է ա հոլովիչով՝ Պունայ (էջ 333, 346), ի Պունայ (էջ 268), սակայն ներգոյական հոլովի դեպքում ի հայտ է եկել ի հոլովիչը՝ ի Պունի (էջ 273, 318): Կաղանկատվացու երկուսն այս տեղանունը բոլոր թեք հոլովներում հանդես է եկել առանց բառամիջի ի ձայնավորի: Այսպիսի գործածություններ գտնում ենք նաև Ղ. Փարպեցու աշխատության մեջ (ի Պունայ, ի Պունի), սակայն զուգահեռաբար ունի ի Պուհնի ձևը: Կաղանկատվացին բառամիջի ի-ն պահպանել է միայն ուղիղ ձևերում:

Բաբելոն բառը ի հոլովմամբ է պատկանել և երկու ձևով է հանդես եկել՝ Բաբելոնի (էջ 48) և Բաբելովնի (էջ 6): Վերջին ձևը գործածել է նաև Խորենացին:

Ասորեստամը գտնում ենք հոլովված ո հոլովիչով՝ Ասորեստանոյն (էջ 170), նաև՝ Ասորեստանի (էջ 173), Երուսաղեմ-ը՝ ի հոլովմամբ (էջ 10, 165, 317), մի դեպքում էլ Երուսաղեմայ (էջ 316), նաև՝ Երուսաղեմեան (էջ 100)¹⁸:

Հաճախադեպ են ու հոլովմամբ հատուկ անունները՝ Պկաթու (էջ 144), Պիտականու (էջ 67), Շաղատու (էջ 108), Կաղստու (էջ 120): Պարահոջը հոլովվել է Պարահոջու (էջ 70) և Պարահոճոյ (էջ 90) ձևերով:

Ալեքսանդրիա քաղաքի անունը հոլովված է Ալեքսանդրու (էջ 343) ձևով: Այսպիսի գործածություն գոյություն է ունեցել նաև V դարի մատենագրության մեջ: Կեսարիա բառի սեռականը գտնում ենք Կեսարու ձևով Փ. Բուզանդի, Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու մոտ: Խորենացին Իկոնիա տեղանունը նույն կերպ է հոլովել՝ Իկոնիու: Սեբեոսի գործում ևս Կեսարիա, Նեոկեսարիա բառերը

¹⁸ Տես սույն հոդվածը:

ու հոլովմամբ են հանդիպում՝ Կեսարու Նեոկեսարու:¹⁹ Գրաբարի դասագրքերը, ինչպես նաև Հր. Աճառյանի «Լիակատար քերականությունը» իա հնչյունակապակցությամբ ավարտվող բառերը տալիս են ա հոլովմամբ, իսկ ուշ շրջանի համար՝ ո: Պետք է փաստենք, սակայն, որ չնայած սակավաթիվ, բայց խորթ չեն ու հոլովմամբ դեպքերը գրաբարում: Խորենացին էս, ոս, աս և նման հնչյունակապակցություններով ավարտվող մի շարք հատուկ անունների հոլովման ժամանակ ևս նախապատվությունը տվել է ու հոլովիչին՝ Յոբիանու, Յովիանու, Վեսպիանու, Յուլիանու, Պոիամու, Վաղենտիանու:

Ո հոլովիչով հետևյալ տեղանունը կա՝ Սպանույ (եջ 6): Հայտնի է, որ իանով վերջացող բառերի ո հոլովման պատկանելը ավելի ուշ շրջանի արդյունք է:²⁰

Հոգնակիություն արտահայտող որոշ մասնիկների մասին խոսենք: Վանք բառի հոգնակին թեև հանդիպում է վանաց (եջ 294) և վանից (եջ 309) ձևերով, այնուամենայնիվ կա նաև որայ մասնիկով գործածություն, որն էլ իր հերթին հոլովվել է՝ վանորայիցն (եջ 285), ի վանորայսն, ի վանորայիցն (եջ 286):

Գիր բառի հոգնակին գործածվել է եան մասնիկով՝ գրեան (եջ 297, 320), որը հոլովվել է գրենոյն ձևով (եջ 321):

Հոգնակիակերտ մասնիկներից գործածել է նաև հետևյալները՝ -անի -աւագանի (եջ 75), -իկ - մարդիկ (եջ 25, 204, 265): Մարդոց ձևը սակավ գործածություն ունի ի տարբերություն մարդիկ ձևի: -Ստան մասնիկով բառեր ևս հանդիպում են՝ յանդաստանս (եջ 199), այգեստանեացն (եջ 133), գիւղաստանեացն (եջ 133), գիւղաստանեայս (եջ 175), գիւղաստանեայք (եջ 185):

Խաչ բառը հանդիպում է խաչերոյն (եջ 74) ձևով, այլ ձեռագրում՝ խաչերուն: Գ. Ջահուկյանը հոգնակիակերտ մասնիկների մասին գրում է. «Այս կարգի մասնիկների մի մասը հանդիպում է միայն ուշ շրջանի գրաբարում կամ միջին հայերենում, բայց անշուշտ իր հիմքերն է ունեցել և ավելի վաղ շրջանում»²¹:

Կաղանկատվացու երկում առկա քերականական որոշ իրողություններ գտնում ենք նաև 10-րդ դարի այլ հեղինակների մոտ: Ի և յ նախդիրների միաժամանակյա գործածությամբ են դիմել պատմիչներ Հովհ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին և Անանունը. օրինակ՝ ի յիրմէ (եջ 324), ի յինէն (եջ 338),²² ի յարքունէ (եջ 116), ի յամրոցացն (եջ 216), ի յընտրելոցն (եջ 282),²³ ի յԱղամայ (եջ 494):²⁴

¹⁹ Տե՛ս Գ. Բաղդիշյան, Սեբեոսի լեզուն և ոճը:

²⁰ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 27:

²¹ Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 85-86:

²² Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1996:

Նրա սխառնակերտոցին և Արծրունին ոչ թե կանաց, այլ կանանց բառածկի գործածությունն են դիմել, ինչպես Կաղանկատվացին (չնայած վերջինս կանաց ձևը շատ քիչ ունի):

Մահու//մահուանն, ամսոյ//ամսեան, Աշոտոյ//Աշոտի տառաօտու//տաօտի, գանձու//գանձի, սովոյ//սովու, հաւոյ//հաւու զուգածնությունները կան բոլոր չորս պատմիչների մոտ:

Ամփոփելով նշենք, որ Կաղանկատվացին գրել է պարզ գրաբարով, դասական գրաբարին հատուկ քերականական ձևերին զուգահեռ գործածել է նաև այնպիսի իրողություններ, որոնք ավելի շատ հատուկ են միջին հայերենին, չնայած դրանք քիչ թիվ են կազմում: Կաղանկատվացու լեզուն չունի դասական հայերենի հարստությունը, դարձվածքների առատությունը, բայց աչքի է ընկնում պարզությամբ:

Յաճախադեպ է ի նախդրի կրկնությունը ինչպես քացառականի, այնպես էլ ներգոյականի կազմության ժամանակ: Անկախ հոլովումից մի շարք բառեր գործիականում – ով վերջավորություն են ստացել, որոշ դեպքերում ներգոյականի իմաստն արտահայտվել է – ում վերջավորությամբ, այսինքն երկում նկատելի են – ով վերջավորությամբ գործիականի և – ում վերջավորությամբ ներգոյականի ընդհանրացման հետքերը:

Բազմաթիվ են հոլովման զուգահեռ ձևերի գործածությունները:

Մի շարք բառեր շեղվում են դասական հայերենին հատուկ հոլովման ձևերից:

Կաղանկատվացին շատ է գործածել հատուկ անունների հոլովման զուգածնություններ: Օրինաչափ ձևերին զուգահեռ որոշ անձնանուններ գործածել է ա հոլովիչով, չնայած դրանք այլ հոլովման բառեր են: Ա հոլովման պատկանող անձնանուններից շատերն էլ գործածել է ի հոլովիչով:

²³ Թ. Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985:

²⁴ Անանուն, Երևան, 1985: